4214

ԹԵԺ ԳԻԾ - 060 50 60 27

(ՀԴՄ-ների հետ կապված խնդիրների աջակցման կենտրոն)

ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 1

ՇՄԱՎՅ-ՄԱՀՕՀՔ-23/22

ք. Երևան 28 փետրվարի 2023թ.

«ՏՈՉ ՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ի դեմս տնօրեն Հովհաննես Հովհաննիսյանի, ով գործում է Ընկերության Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից (այսուհետ Կատարող), և Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեն ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի
(այսուհետ՝ Պատվիրատու)՝ մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն Պայմանագիրը կարգավորում է Պատվիրատուի և Կատարողի միջև առաջացող հարաբերությունները՝ կապված Կատարողի կողմից Պատվիրատուի հանձնարարությամբ Պատվիրատուին պատկանող թվով 1 հատ բազմաֆունկցիոնալ հսկիչդրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ) սպասարկումն իրականացնելու հետ, մասնավորապես՝

- ՀԴՄ-ների ցանցին միացումը, ՀԴՄ-ի աշխատանքի ստուգումը և դրա գործարկումը,
- ՀԴՄ-ների միջոցով կատարված դրամական հաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմին ցանցային կապի միջոցներով ուղարկումը և պլաստիկ քարտերով հաշվարկների կատարումն ապահովելու համար կապի ապահովումը՝ շարժական կամ ֆիքսված հեռախոսակապի օպերատորի միջոցով,
- ՀԴՄ-ների ընթացիկ սպասարկումը և վերանորոգման կազմակերպումը,
- Խափանված ՀԴՄ-ի փոխարեն Պատվիրատուի պահանջով անհատույց տրամադրել սպասարկման կենտրոնին պատկանող մեկ այլ ՀԴՄ,
- Պատվիրատուի կողմից որևէ բանկի հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԴՄ սարքով վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով անկանխիկ դրամական հաշվարկների իրականացման ծառայությունը (այսուհետ՝ POS ծառայություն) ստանալու դեպքում, ապահովել POS ծառայության համար անհրաժեշտ կապի առկայությունը,

1.2 Պատվիրատուի կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը հարկվում է — և կամ վճարով: Պայմանագրի գործունեության ընթացքում Պատվիրատուի հարկային տվյալների մեջ փոփոխության դեպքում վերջինս փոփոխությունից անմիջապես հետո այդ մասին պարտավոր է տեղեկացնել Կատարողին:

1.3 Սույն Պայմանագրի 1.2 կետում նշված տեղեկատվությունը Պատվիրատուի կողմից չտրամադրելու կամ սխալ տրամադրելու դեպքում Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում:

1.4 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել վերոնշյալ ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված չափով և կարգով:

1.5 Կատարողը Ծառայությունները մատուցում է իր որակավորված աշխատողների միջոցով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1 Պայմանագիրը սկսում է գործել Պատվիրատուի և Կատարողի միջև Պայմանագրի կնքման օրվանից և գործողությունը դադարում է կա՛մ Կողմերի համաձայնությամբ՝ վաղաժամկետ, կա՛մ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ սույն Պայմանագրով և/կամ օրենքով նախատեսված դեպքերում:

2.2 Պայմանագիրը կնքվում է անժամկետ:

2.3 Պայմանագրի գործողության ընթացքում սպասարկվող ՀԴՄ-ն կամ դրանցից մեկը այլ ՀՎՀՀ-ով գրանցելու դեպքում տվյալ ՀԴՄ-ի մասով սույն Պայմանագիրը համարվում է դադարեցված:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողի կողմից ՀԴՄ-ի ընթացիկ սպասարկման արժեքը, որը կազմում է ամսական առավելագույնը 3600 (երեք հազար վեց հարյուր) դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ի, որի մեջ ներառված է կապի ծառայության արժեքը:

3.2 Պայմանագրի 3.1 կետում նշված արժեքը հաշվարկվում է ՀԴՄ-ի գործած օրերի համար: ՀԴՄ-ի կարգավիճակը դառնում է գործող ակտիվացման օրվանից մինչ դրա գրանցումից հանելը:

3.3 ՀԴՄ-ի վերանորոգման համար անհրաժեշտ պարագաների (պահեստամասերի և այլն) և աշխատանքների ցանկը, ինչպես նաև դրանց արժեքները սահմանում է Կատարողը՝ Պատվիրատուի կողմից ընտրված սակագնային փաթեթի համար այդ պահին իր մոտ գործող գնացուցակին համապատասխան :

3.4 ՀԴՄ-ն սպասարկման կենտրոն և ետ տեղափոխելու գործընթացը և վճարման կարգը սահմանում է Կատարողը՝ Պատվիրատուի կողմից ընտրված սակագնային փաթեթի համար այդ պահին իր մոտ գործող գնացուցակին համապատասխան:

3.4.1 Կատարողի կողմից ՀԴՄ-ի վերանորոգումից հետո և դրա արդյունքում առաջացած անսարքության դեպքում Պատվիրատուն պարտավոր է այդ մասին հայտնել Կատարողին՝ Երևան քաղաքում 2 աշխատանքային ժամվա ընթացքում, իսկ Հանրապետության այլ վայրերում՝ 5 աշխատանքային ժամվա ընթացքում: Սույն կետում նշված դեպքում ՀԴՄ-ի տեղափոխման տրանսպորտային ծախսերը փոխհատուցում է Կատարողը՝

- ՀՀ-ում գործող տաքսի ծառայությունների կողմից սահմանված միջին հաշվարկային դրույքաչափով, եթե ՀԴՄ-ի սպասարկման կենտրոնի և ՀԴՄ-ի գործունեության հասցեի միջև հեռավորությունը չի գերազանցում 15 կմ:
- ՀՀ-ում գործող միջմարզային կամ միջքաղաքային ավտոբուսային երթուղիների սակագներով, եթե ՀԴՄ-ի սպասարկման կենտրոն և ՀԴՄ-ի գործունեության հասցեի միջև հեռավորությունը գերազանցում է 15 կմ:

3.5 Սույն Պայմանագրի 3.1, 3.2, 3.3 և 3.4 կետերին համապատասխան վճարման ենթակա գումարները Պատվիրատուի կողմից Կատարողին վճարվում են Կատարողի կողմից հաշիվ-ապրանքագիրը (հարկային հաշիվը) ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային հաշվում (հաշիվ-ապրանքագրում) նշված Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Հարկային հաշվի (հաշիվ-ապրանքագրում) հետ կապված հարաբերություններում Պատվիրատուին ներկայացնում է _____ (կոնտակտային անձ) (_____) (հասցե, հեռախոսահամար):

3.6 Պատվիրատուին ապառքի վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրվի վերոնշյալ հեռախոսահամարին SMS հաղորդագրություն ուղարկելու միջոցով, որը կհամարվի Կատարողի կողմից պատշաճ ծանուցում:

4. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1 Կատարողից պահանջել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների որակյալ և ամբողջական մատուցում:

4.1.2 Կատարողից պահանջել վերացնել Ծառայությունների մատուցման ընթացքում նրա մեղքով առաջացած թերությունները:

4.1.3 Հրաժարվել ՀԴՄ-ի սպասարկման Ծառայություններից՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Կատարողին:

4.2 Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1 Վճարել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների համար սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

4.2.2 ՀԴՄ-ն շահագործել արտադրողի կողմից սահմանված տվյալ մոդելի շահագործման կանոնների և «Հսկիչ-Դրամարկղային Մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, Հսկիչ-Դրամարկղային Մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից

4.2.1 Վճարել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների համար սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

4.2.2 ՀԴՄ-ն շահագործել արտադրողի կողմից սահմանված տվյալ մոդելի շահագործման կանոնների և «Հսկիչ-Դրամարկղային Մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, Հսկիչ-Դրամարկղային Մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգն ու Հսկիչ-Դրամարկղային Մեքենայի կիրառության կանոնները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումամբ սահմանված կանոններին համապատասխան (այսուհետ՝ Շահագործման կանոններ):

4.2.3 ՀԴՄ-ն շահագործելիս պահպանել կապարակնիքները:

4.2.4 Բացառել ՀԴՄ-ն քանդելը, դրա ապարատային մաս մուտք գործելը, ՀԴՄ-ի աշխատանքային ծրագրում փոփոխություն կատարելը կամ դրանց փորձը:

4.2.5 ՀԴՄ-ն շահագործումից հանելու դեպքում առնվազն 10 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Կատարողին:

4.2.6 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, պատշաճ կատարել այդ ծառայության հետ կապված բանկի հետ կնքված պայմանագրի դրույթները,

4.3 Սույն Պայմանագիրը ստորագրելով՝ Պատվիրատուն հաստատում է, որ տեղյակ է, որ ՀԴՄ-ն քանդելու ցանկացած փորձի դեպքում ՀԴՄ-ն այլևս օգտագործման կամ վերանորոգման ենթակա չէ:

5. ԿԱՏԱՐՈՂԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողն իրավունք ունի՝

5.1.1 Պատվիրատուից պահանջել վճարել մատուցվող Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

5.1.2 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով վճարում չկատարելու դեպքում դադարեցնել Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը, այդ թվում կապի Ծառայությունների համար վճարի փոխանցումը ցանցային կապի օպերատորին:

5.1.3 Պատվիրատուից պահանջել չխոչընդոտել Ծառայությունների մատուցմանը:

5.1.4 Ֆորս-մաժորային հանգամանքների առկայության դեպքում դադարեցնել Ծառայությունների մատուցումը՝ նախապես տեղեկացնելով Պատվիրատուին:

5.1.5 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված Պատվիրատուի կողմից ծառայության վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, բանկի պահանջով դադարեցնել կամ կասեցնել Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ կապի Ծառայությունների համար վճարի փոխանցումը ցանցային կապի օպերատորին մինչև գումարի վճարումը:

5.1.6 Սպասարկման նպատակով Պատվիրատուի կողմից կատարված հեռախոսազանգը Կատարողին կամ Կատարողի մատնանշած հեռախոսային կենտրոն ձայնագրել և պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, որին Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը:

5.2 Կատարողը պարտավոր է՝

5.2.1 Սույն Պայմանագրի 1-ին կետով սահմանված Ծառայությունները մատուցել պատշաճ կարգով և որակով:

5.2.2 ՀԴՄ-ն կիրառության մեջ դնելուց առաջ ստուգել դրա աշխատանքը, իրականացնել ՀԴՄ-ների ընթացիկ, այդ թվում՝ ծրագրային սպասարկումը:

5.2.3 Աջակցել Պատվիրատուի ՀԴՄ օգտագործող աշխատակիցներին (ադմինիստրատորներ, գանձապահներ) ՀԴՄ-ի աշխատանքի սկզբունքների և մեթոդների ուսուցման հարցում:

5.2.4 Ապահովել ցանցային կապին վերաբերող՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի և «ԱրՔա» համակարգի հետ աշխատանքի համար անհրաժեշտ տվյալների (SIM քարտի համար, ֆիքսված հեռախոսահամար, IP հասցե և այլն) հարկային մարմին և «ԱրՔա» համակարգին տրամադրումը:

5.2.5 ՀԴՄ-ի անսարքությունը վերացնելուց հետո Կատարողի մեղքով առաջացած թերությունները ողջամիտ ժամկետում վերացնել Կատարողի հաշվին՝ առանց լրացուցիչ վարձավճարի:

5.2.6 ՀԴՄ-ի նորոգման աշխատանքների ժամանակահատվածի համար Պատվիրատուի դիմելու դեպքում ժամանակավորապես Պատվիրատուին անհատույց տրամադրել ՀԴՄ:

5.2.7 Պատվիրատուի կողմից ՀԴՄ-ի անսարքության վերաբերյալ Կատարողին հայտնելուց հետո ապահովել ՀԴՄ-ի անսարքության վերացումը՝ Երևան քաղաքում առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Հանրապետության այլ վայրերում՝ առնվազն 72 աշխատանքային ժամվա ընթացքում: Նշված ժամկետները կարող են փոփոխվել առաջացած խնդրի բարդության մակարդակին համապատասխան:

5.2.8 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը Պատվիրատուին ներկայացնել մատուցած Ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը (հարկային հաշիվ):

5.2.9. ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, ապահովել անհրաժեշտ կապ POS ծառայությունների իրականացման համար, ապահովել Պատվիրատուի կողմից ՊՈՍ ծառայության դեպքում առաջացած հարցերի և բողոքների քննարկումը և խորհրդատվության տրամադրումը, բացառությամբ այն հարցերի, որոնք չեն մտնում Կատարողի իրավասության մեջ և Բանկը պետք է պատասխանի այդ հարցերին: Մասնավորապես Կատարողի իրավասության մեջ չմտնող հարցեր են այն հարցերը, որոնք կապված են ՀԴՄ-ի միջոցով գործարք իրականացնելիս խափանման հետ հետևյալ պատճառներից որևէ մեկով.

- Գումարը գանձվել է քարտապանից, բայց տպվել է մերժված կտրոն,
- Գումարը գանձվել է քարտապանից, բայց կտրոն չի տպվել և կրկնօրինակի տպում չի լինում իրականացնել,
- Գումարը քարտապանից կրկնակի է գանձվել,
- Գործարքները մերժվում են և հարկավոր է ճշտել պատճառները,
- Առկա է որոշ քարտատեսակների սպասարկման խնդիր,
- Գումարը սխալ է գանձվել և հարկավոր է կապ հաստատել քարտապանի, իսկ ՀՀ այլ բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում՝ համապատասխան բանկերի հետ, քարտապանին տեղեկացնելու և գումարի տարբերությունը վճարելու նպատակով Պատվիրատուի մոտ կանչելու համար,
- Պատվիրատուն ցանկանում է գանձված գումարը ետ վերադարձնել քարտապանին, բայց առանց քարտապանի ներկայության:

6. ՀԴՄ-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

6.1 ՀԴՄ-ի երաշխիքային ողջ ժամկետի ընթացքում վերանորոգման նպատակով օգտագործված սարքավորումները Կատարողի կողմից տրամադրվում են անվճար, բացառությամբ սույն պայմանագրի 6.2 կետի:

6.2 MF2351 մոդելի ՀԴՄ-ի երաշխիքային սպասարկումը չի ներառում սարքի մարտկոցի նորոգումը, իսկ Pax, Aisino A90 և Move 3500 մոդելի ՀԴՄ-ի երաշխիքային սպասարկումը չի ներառում մարտկոցի և տպիչի նորոգումը: Երաշխիքային սպասարկման ենթակա չեն այն սարքավորումները, որոնց վրա բացակայում է կամ վնասված է կապույտ կնիքը ինչպես նաև եթե թերություններն առաջացել են հետևյալ դեպքերում.

- ՀԴՄ-ի և դրա պահեստամասերի սխալ շահագործման, անփույթ վերաբերմունքի կամ պատահարի հետևանքով առաջացած մեխանիկական, ջերմային և այլ արտաքին և ներքին վնասվածքների առկայության դեպքում,
- սխալ տեղադրման, տեղափոխման պատճառով,
- սարքի մեջ օտար մարմնի, հեղուկների առկայության դեպքում,
- սնուցման և հեռահաղորդակցության ցանցերի Պետական տեխնիկական չափանիշներից շեղումների դեպքում,
- սարքավորման ինքնությունը հաստատող տեղեկությունների հեռացման կամ աղավաղման դեպքում,
- սարքի ինքնուրույն վերանորոգման կամ ձևափոխությունների փորձերի դեպքում:

6.3 Երաշխիքային սպասարկում չի իրականացվում երաշխիքային կտրոնի կամ ՀԴՄ-ի ձեռքբերման պայմանագրի բացակայության դեպքում:

6.4 Կատարողի կողմից Պատվիրատուի ՀԴՄ-ի ետերաշխիքային վերանորոգման ընթացքում Կատարողի կողմից օգտագործված սարքավորումների արժեքը վճարվում է առանձին՝ սույն Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել սույն Պայմանագրի կնքման արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները, որոնք վերաբերում են մյուս Կողմին և առևտրային կամ այլ գաղտնիք են պարունակում:

7.2 Սույն Պայմանագրի 7.1. դրույթը չի վերաբերում այնպիսի տեղեկատվությանը, որի չհրապարակումը հակասում է ՀՀ օրենսդրությանը կամ որը, մինչ կողմին հայտնի դառնալը, արդեն հայտնի է եղել երրորդ անձանց:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Կողմերը սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

8.2 Եթե օրենսդրության փոփոխության արդյունքում մատուցված Ծառայությունները չեն համապատասխանում դրանց փոփոխված տարբերակին, ապա Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե օրենսդրական փոփոխությունները ուժի մեջ են մտել Ծառայությունները մատուցելուց հետո:

8.3 ՀԴՄ-ների անսարքությունները և աշխատանքի խափանումները, որոնք առաջացել են Շահագործման կանոնները Պատվիրատուի կողմից խախտելու դեպքում, կարող են վերացվել Կատարողի կողմից Պատվիրատուի հաշվին:

8.4 Եթե Պատվիրատուն ուշացնում է սույն Պայմանագրով սահմանված կարգով վճարումներ կատարելը, ապա Ծառայությունների մատուցումը կասեցվում է մինչև գումարի վճարումը, իսկ վճարումը կատարելուց հետո Ծառայությունների մատուցումը վերսկսվում է:

8.5 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված Պատվիրատուի կողմից ծառայության վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, բանկի պահանջով Կատարողը դադարեցնում կամ կասեցնում է Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ կապի Ծառայությունների համար վճարի փոխանցումը ցանցային կապի օպերատորին մինչև գումարի վճարումը, իսկ վճարումը կատարելուց հետո բանկից այդ մասին տեղեկություն ստանալուց հետո Ծառայությունների մատուցումը վերսկսվում է: Ընդ որում՝ սույն կետի կիրառման համար բավարար է Բանկի գրավոր տեղեկատվության փոխանցումը պայմանագրով նախատեսված վճարումը ժամանակին չկատարելու, իսկ վերսկսելու դեպքում՝ արդեն գումարը վճարված լինելու մասին:

9. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

9.1 Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն Պայմանագրի պարտավորությունների մասնակի կամ ոչ լրիվ կատարման համար, եթե այդ չկատարումը հանդիսացել է անհաղթահարելի ուժի հետևանք, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նշված հանգամանքների առաջացման դեպքում յուրաքանչյուր Կողմ պետք է անմիջապես դրանց մասին գրավոր ձևով տեղեկացնի մյուս Կողմին: Նշված հանգամանքների առաջացման դեպքում սույն Պայմանագրով Կողմի պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է այն ժամանակին համաչափ, որի ընթացքում գործում են այդ հանգամանքները և դրանց հետևանքները:

9.2 Եթե 9.1 կետում թվարկված հանգամանքները և դրանց հետևանքները շարունակում են գործել երեք ամսից ավելի, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի այդ մասին 5 օր առաջ տեղեկացնելով մյուս Կողմին՝ լուծել սույն Պայմանագիրը:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1 Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի համաձայնությամբ:

10.2 Սույն Պայմանագիրը համարվում է լուծված Պայմանագրի գործողության ընթացքում սպասարկվող ՀԴՄ-ն կամ դրանցից մեկը այլ ՀՎՀՀ-ով գրանցելու դեպքում տվյալ ՀԴՄ-ի մասով:

10.3 Որևէ Կողմի կողմից սույն Պայմանագրի պայմանների խախտման դեպքում մյուս Կողմը կարող է խախտում կատարած Կողմին ներկայացնել խախտումների վերաբերյալ գրավոր զգուշացում: Վերջինս պարտավոր է

խախտումները վերացնել գրավոր զգուշացումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի վերաբերյալ ներկայացնում է գրավոր պատասխան:

10.4 Պայմանագրի խախտումները չվերացնելու դեպքում այդ խախտումները վերացնել պահանջող կողմն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը:

11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11.1 Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

11.2 Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1 Սույն Պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Փոփոխությունները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը և Պայմանագրին հակասելու դեպքում գործում են փոփոխություններով որոշված դրույթները:

12.2 Սույն Պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ, գրավոր ձևով:

12.3 Պայմանագրի մի մասի անվավեր ճանաչումն անվավեր չի դարձնում նրա մյուս մասերը:

13. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13.1 Սույն Պայմանագիրը պարունակում է Կողմերի միջև լիակատար համաձայնություն և չեղյալ է համարում բոլոր տեսակի հայտարարությունները, որոնք արված են եղել Կողմերի միջև գրավոր կամ բանավոր:

13.2 Կողմերի միջև բոլոր ծանուցումները, պահանջները և այլ հաղորդակցությունը կատարվում են գրավոր ձևով սույն Պայմանագրով սահմանված հասցեներով, ինչպես նաև SMS հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

13.3 Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, 2 (երկու) օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրի մոտ մեկական օրինակով: Սույն Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում դրա Հավելվածները:

13.4 Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՏՈՉ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ Իրավաբ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փ. 7 թիվ 24 տարածք Գործուն. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 7/1, ՀՎՀՀ՝ 01562313 Հ/Հ(դրամ)՝ 005-026273-001 Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ Հեռ. 060 50-60-27 Տնօրեն՝ Հովհաննես Հովհաննիսյան Կ.Տ.	Հասցե՝ 22գ. Գեղարքունիք 129 ՀՎՀՀ՝ 00476409 Հ/Հ՝ 9000110232265 Բանկ՝ ՖԱ. պետական գանձարան գործարան գլխավոր տնօրեն Լ. Պետրոսյան Կ.Տ.